ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
առաջին (դպրոցական) փուլի – 2016 թ.

/Տևողությունը 120 րոպե/

11-12-րդ դասարաններ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. *Աշխարհագրական մշակույթի բաղադրիչներից չէ (չեն).*
   1) աշխարհագրության լեզուն
   2) աշխարհագրական հետազոտությունների մեթոդները
   3) աշխարհագրական հայտնագործությունները
   4) աշխարհագրական մտածողությունը:
2. *Բնութագրումով որոշել մեթոդը.*
   Աշխարհագրական գիտական ճանաչողության այս մեթոդը հնարավորություն է տալիս լուծելու աշխարհագրական օբյեկտների դասակարգման խնդիրը՝ ըստ ընդհանուր և էական հատկանիշների: Ո՞ր մեթոդն է.
   1) համեմատական-աշխարհագրական
   2) նկարագրական
   3) քարտեզագրական
   4) դաշտային (արշավախմբային):
3. *Ո՞ր պնդումն է ճիշտ.*
   Եթե հակումն արևմտյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.
   1) մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը
   2) մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակման վրա
   3) մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը
   4) մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով:
4. *Աշխարհագրական օբյեկտը արևելյան երկայնության 45^0-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.*
   1) 21-րդ, 2) 22-րդ, 3) 4-րդ, 4) 3-րդ:
5. *Ո՞ր դարաշրջանում է տեղի ունեցել կալեդոնյան ծալքավորությունը.*
   1) Արխեյան 3) Պալեոզոյան
   2) Պրոտերոզոյան 4) Մեզոզոյան:
6. *Երկրի տրանսպորտային համակարգը ձևավորվում է.*
   1) տրանսպորտային ձեռնարկություններից
   2) հաղորդակցության ուղիներից
   3) տրանսպորտային միջոցներից
   4) բոլոր վերը թվարկածներից:
7. *Բնակչության բնական աճի նվազման վրա չի ազդում.*
   1) կանանց զբաղվածության աճը
   2) կանանց կրթական մակարդակի աճը
   3) ուրբանիզացման մակարդակի բարձրացումը
   4) աշխատանքի աշխարհագրական բաժանումը:
8. *Ո՞ր շարքում է ճիշտ հաջորդականությամբ ներկայացված սև մետաղածուլության արտադրական փուլերը.*
   1) երկաթի հանքաքարի արդյունահանում - երկաթաքարի հարստացում-պողպատի արտադրություն-թուջի արտադրություն-գլանվածքի արտադրություն
   2) երկաթի հանքաքարի արդյունահանում-երկաթաքարի հարստացում-գլանվածքի արտադրություն-թուջի արտադրություն-պողպատի արտադրություն
   3) երկաթի հանքաքարի արդյունահանում-երկաթաքարի հարստացում – թուջի արտադրություն-պողպատի արտադրություն-գլանվածքի արտադրություն
   4) երկաթաքարի հարստացում- երկաթի հանքաքարի արդյունահանում- թուջի արտադրություն-պողպատի արտադրություն-գլանվածքի արտադրություն:

9. *Զարգացած երկրներում «գիտություն-կրթություն-արտադրություն» համակարգի ձևավորման շնորհիվ սկսեցին ձևավորվել.*
   1) տեխնածին լանդշաֆտներ
   2) գիտակրթական համալիրներ
   3) տեխնոլոգիական շղթաներ
   4) տեխնոպոլիսներ:
10. *Հյուսիսային կիսագնդի ո՞ր շարքի բնական զոնաներն են դասավորված հյուսիսից հարավ ճիշտ հերթականությամբ.*
   1) սավանաներ, անապատներ և կիսանապատներ, անտառատափաստաններ և տափաստաններ
   2) տունդրա, բարեխառն գոտու անտառներ, անտառատափաստաններ և տափաստաններ
   3) բարեխառն գոտու անտառներ, անապատներ և կիսանապատներ, անտառատափաստաններ և տափաստաններ
   4) տունդրա, անտառատափաստաններ և տափաստաններ, բարեխառն գոտու անտառներ, կիսանապատներ և անապատներ:
11. *ՀՀ պոլիմերների քիմիայի ենթաճյուղի արտադրատեսակներն են.*
   1) քիմիական ռեակտիվները և վիտամինները
   2) ծծմբական թթուն և պղնձարջասպը
   3) ազոտային պատրաստանյութերը
   4) պլաստմասսան և քիմիական մանրաթելերը
12. *Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ.*
   1) արոտաշրջանառության կազմակերպումը
   2) կենսատեխնիկական միջոցառումների կազմակերպումը
   3) կլիմայավարժեցումը և վերաբնակեցումը
   4) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
13. *Ջրսպառող է.*
   1) ջրային տրանսպորտը 3) ջրաէներգետիկան
   2) գյուղատնտեսությունը 4) ձկնային տնտեսությունը:
14. ԼՂՀ-ի մասին ո՞ր պնդումն է ճիշտ.
   1) տրանսպորտի հիմնական տեսակը երկաթուղայինն է.
   2) Գորիս-Բերձոր-Ստեփանակերտ բարեկարգ ավտոխճուղին անցնում է Լիսագորի լեռնանցքով
   3) Մարտունին և Ստեփանակերտը երկաթուղային կայարաններ են
   4) Շուշիում է Գանձասարի վանքային համալիրը:
15. Անկլավ է.
   1) Նախիջևանը 3) Կալինինգրադի մարզը
   2) Լեսոտոն 4) Ալյասկան

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. *Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը -14^{0}է, իսկ նույն պահին ստորոտում՝ +4^0: Օդի ճնշումը գագաթին 380 մմ է: Որքա՞ն կլինի օդի ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել 6^0-ով):*
17. *Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն: Որոշել ուրբանիզացիայի մակարդակը:*
18. *Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 840 000 ցենտներ, իսկ ցանքատարածությունների մակերեսը՝ 24 000 հեկտար: Որքան կլինի միջին բերքատվությունը:*
19. *Ռուսական «Միռնի» գիտակայանը հարավային բևեռից հեռու է 2664 կմ: Հարավային ո՞ր լայնությունում է գտնվում գիտակայանը:*
20. *Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 4400 մ է, իսկ գետաբերանինը՝ 1400 մ: Գետի երկարությունը 250 կմ է: Որոշել նրա թեքությունը.*